Կարգապահական գործ թիվ ԿԳ-16222

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մայիսի 16-ի թիվ 78-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/52-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** խորհուրդը, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ Պալատի կարգապահական գործերը համակարգող՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան՝ Վահե Դանիելյանին (արտոնագիր № 2080) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>

24.11.2016 թվականին Պալատում ստացվել է ՀՀ կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դիմող)** դատավոր Հովհաննես Ավագյանի դիմումը՝ փաստաբան Վահե Դանիելյանի **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Դիմողը նշել է, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԿԴ2/0054/01/16 քրեական գործը: Քրեական գործը դատական քննության է նշանակվել 2016 թվականի սեպտեմբերի 1-ին:

Դիմողը նշել է, որ 2016 թվականին սեպտեմբերի 8-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է ամբաստանյալ Վ.Սարգսյանի բացակայության պատճառով: Դատական նիստին մասնակցել է ամբաստանյալի պաշտպան Վահե Դանիելյանը:

Դիմողը որոշմամբ հայտնել է, որ հաջորդ դատական նիստը նշանակվել է 2016 թվականի հոկտեմբերի 3-ին, որը կրկին հետաձգվել է ամբաստանյալ Վ. Սարգսյանի բացակայության պատճառաբանությամբ: Նշված դատական նիստին մասնակցել է ամբաստանյալի պաշտպան Վահե Դանիելյանը՝ միաժամանակ, որոշում է կայացվել ամբաստանյալին բերման ենթարկելու մասին:

Դիմողը նաև հայտնել է, որ 2016 թվականի հոկտեմբերի 14-ին նշանակված դատական նիստին ներկայացվել է (բերման է ենթարկվել) ամբաստանյալ Վ.

Սարգսյանը և ներկայացել է պաշտպան Վահե Դանիելյանը: Պաշտպանական կողմը ներկայացրել է միջնորդություն, որը բավարարվել է և գործի դատական քննությունն իրականացվել է արագացված կարգի կիրառմամբ: Դատաքննությունն ավարտելուց և մեղադրողի, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի ճառերն ունկնդրելուց հետո պաշտպան Վ. Դանիելյանը խնդրել է իրեն ժամանակ տրամադրել պաշտպանական ճառին պատրաստվելու համար: Այդ նպատակով դատական նիստում հայտարարվել է ընդմիջում՝ երկու ժամ տևողությամբ:

Ըստ որոշման՝ ընդմիջումից հետո պաշտպան Վ. Դանիելյանը հայտարարել է, որ երկու ժամը բավարար չէ պաշտպանական ճառով հանդես գալու համար և դատական նիստը հետաձգվել է 2016 թվականի նոյեմբերի 3-ին:

Նշված օրը պաշտպան Վ. Դանիելյանը չի ներկայացել դատական նիստին և նույն օրը դատարան մուտք է եղել փաստաբան Վ. Դանիելյանի կողմից ստորագրված դիմում, որով խնդրել է հետաձգել դատական նիստը աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով: Նիստը հետաձգվել է և նշանակվել նոյեմբերիի 15-ին:

Դիմողը հայտնել է, որ 2016 թվականի նոյեմբերի 15-ին նշանակված նիստին պաշտպան Վ. Դանիելյանը նույնպես չի ներկայացել և նույն օրը դատարան մուտք է եղել փաստաբան Վ. Դանիելյանի կողմից ստորագրված դիմում, որով խնդրել է հետաձգել դատական նիստը մեկ այլ քննչական գործողության մասնակցելու պատճառով:

Դիմողը արձանագրել է, որ ամբաստանյալ Վ. Սարգսյանի պաշտպան Վ. Դանիելյանը նշված գործով նշանակված դատական նիստին չի ներկայանում, պատճառաբանելով, որ ծանրաբեռնված է այլ աշխատանքով, ինչի արդյունքում հնարավոր չէ ունկնդրել պաշտպանական կողմի ճառերը և ավարտել գործի քննությունը:

Դիմողը նշել է, որ վերոգրյալը ոչ այլ ինչ է, քան դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ փաստաբան Վ. Դանիելյանի կողմից դրսևորած անհարգալից վերաբերմունք:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 16.12.2016 թվականի թիվ 493-Ա/ԿԳ-16222 որոշմամբ փաստաբան Վահե Դանիելյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

Տվյալ կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հովհաննես Ավագյան), կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Մարինե Թովմասյանին:

<u>3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Դիմողը նախապատրաստման փուլում բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2.Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Հարուցված կարգապահական վարույթի կապակցությամբ Պատասխանողը բացատրություն է ներկայացրել Պալատ, որով հայտնել է, որ 2016 թվականի սեպտեմբերի 1-ին ԿԴ2/0054/01/16 քրեական գործը նշանակվել է դատաքննության և առաջին դատական նիստը հրավիրվել է 2016 թվականի սեպտեմբերի 8-ին, որը հետաձգվել է ամբաստանյալի (դանակահարության հետևանքով ստացած մարմնական վնասվածքների պատճառով գտնվել է հիվանդանոցում) չներկայանալու պատճառով և հաջորդ դատական նիստը նշանակվել է 2016 թվականի հոկտեմբերի 3-ին, որին կրկին չի ներկայացել ամբաստանյալը, ինչի հետևանքով Դատարանի կողմից կայացվել է վերջինիս բերման ենթարկելու մասին որոշում:

Սույնի հետ կապված Վահե Դանիելյանը հայտնել է, որ իր պաշտպանյալ Վանիկ Սարգսյանը նշված ժամանակահատվածում դեռևս գտնվել է բուժման մեջ, ինչի վերաբերյալ հոկտեմբերի 3-ին դատական նիստին իր կողմից ներկայացվել է համապատասխան բժշկական փաստաթուղթ՝ տրված «Հրազդան» ԲԿ-ի կողմից՝ վերջինիս բացակայությունը հարգելի համարելու համար, սակայն պաշտպանական կողմի համար անհասկանալի պատճառով Դատարանի կողմից կայացվեց ապօրինի բերման ենթարկելու մասին որոշում՝ պատճառաբանելով, որ Վանիկ Սարգսյանը չի ներկայացել նշված դատական նիստին:

Պատասխանողը նշել է, որ 2016 թվականի հոկտեմբերի 14-ին նշանակվել է հաջորդ դատական նիստը, ինչի ընթացքում Դատարանը ևս դրսևորելով շտապողականություն և օբյեկտիվ արդարադատություն իրականացնելու փոխարեն ամեն կերպ ջանալով սույն գործով կայացնելու դատական ակտ, փորձել է սահմանափակել պաշտպանական կողմի՝ պաշտպանական ճառին պատրաստվելու իրավունքը՝ տալով 2 ժամ ժամանակ՝ պատճառաբանելով, որ Դատարանը պետք է գնա արձակուրդ: Երկու ժամ անց Պատասխանողը հայտնել է, որ երկու ժամը բավարար չէ պաշտպանական ճառով հանդես գալու համար:

Պատասխանողի խոսքերով 2016 թվականի նոյեմբերի 3-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է ոչ միայն իր, այլ նաև մեղադրողի չներկայանալու պատճառով: Իսկ 2016 թվականի նոյեմբերի 15-ին նշանակված դատական նիստին չի ներկայացել, քանի որ նշված օրը 10:00-ից եղել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության վարչությունում՝ մասնակցելով քննչական գործողության, ինչից հետո ի վիճակի չի եղել Երևանից մեկնել Չարենցավան:

Պատասխանողը գտնում է, որ նման որոշում կայացնելով Դատարանը դրսևորել է կամայականություն, ոչ օբյեկտիվություն, իսկ իր նման հետևությունը հիմնված է Դատարանի կողմից սույն գործի դատական քննության ընթացքում թույլ տված անօրինական գործողություններով (անհիմն որոշում կայացնելն ամբաստանյալին բերման ենթարկելու վերաբերյալ, պաշտպանական կողմի իրավունքը սահմանափակելը, իր կողմից նախապես ներկայացված դիմումները հաշվի չառնելը):

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Մարինե Թովմասյանին, ով 17.02.2017 թվականին խորհրդին ներկայացրել է եզրակացություն:

20.02.2017թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի մայիսի 16-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5.Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 2016 թվականի հոկտեմբերի 14-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է և նշանակվել է 2016 թվականի նոյեմբերի 3-ին Վ. Դանիելյանի կողմից պաշտպանական ճառին պատրաստվելու համար:

2. 2016 թվականի նոյեմբերի 3-ին նշանակված դատական նիստին Պատասխանողը չի ներկայացել՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ին ներկայացնելով գրավոր դիմում իր բացակայությունը հարգելի համարելու մասին: Նշված դատական նիստին չի ներկայացել նաև մեղադրողը:

3. 2016 թվականի նոյեմբերի 15-ին նշանակված դատական նիստին չի ներկայացել՝ դատարանի գրասենյակ 2016 նոյեմբերի 14-ին դիմում ներկայացնելով չներկայանալու պատճառների մասին:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, ադ թվում՝ Պատասխանողի բացատրությունով, դատական նիստի արձանագրություններով և դատական նիստի ձայնագրառման կրիչով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Վահե Դանիելյանը փաստաբան է հանդիսանում 30.04.2016թ., և 2016-2017թթ. Ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթի):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահե Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար»:*

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.[1]-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. «***Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու,*** *դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները .... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:»:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն. «*Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ»:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Խորհուրդը գտնում է, որ սույն գործով փաստաբանը իր կամքից անկախ հանգամանքների պատճառով հայտնվել է մի իրավիճակում, որի պայմաններում ինքը պետք է մասնակցեր մի դեպքում դատական նիստի ժամը 12:30-ին Չարենցավան քաղաքում, իսկ մյուս դեպքում՝ քննչական գործողության 10:00-ին Երևան քաղաքում: Ուստի նշվածի հաշվառմամբ Պատասխանողը նախապես տեղեկացրել է այդ մասին դատարանին՝ խնդրելով հետաձգել նշանակված դատական նիստը: Հետևաբար,

փաստաբանը գործել է ողջամտության շրջանակներում և ոչինչ չի հուշում, որ նա ունեցել է դիտավորություն անհարգալից վերաբերմունք ցուցաբերել դատարանի կամ դատավարության մասնակիցների նկատմամբ: Ինչ վերաբերում է նոյեմբերի 3-ին նշանակված նիստի հետաձգմանը, որին չի ներկայացել նաև մեղադրող կողմը, ապա Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը նիստին չներկայանալու վերաբերյալ նախապես տեղեկացրել է դատարանին, որը դատարանը դիտել է հարգելի, քանի որ որևէ դիրքորոշում չհայտնելով ՝դատական նիստը հետաձգել է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 16.12.2016 թվականի թիվ 493-Ա/ԿԳ 16222 որոշմամբ փաստաբան Վահե Դանիելյանի (արտոնագիր № 2080) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան